

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆԻՑ

ՍԱՂՄՈՍ Դ

1.—Երգուսույցին
2.—Երբ քեզ դիմեցի, դու ինձ լսեցիր
ըստ արդարության, ո՞վ իմ Աստված.
նեղության մեջ ինձ խաղաղեցրիր,
ողորմի՛ր ինձ, լսի՞ր իմ աղոթքը:
3.—Մարդկանց որդիներ,
մինչև ե՞րբ պիտի խստասիրտ լինեք,
ինչո՞ւ եք սիրում նանրությունը
և սուտը փնտրում:
4.—Իմացե՛ք, որ Տերը հրաշքներ գործեց
իր սրբի համար,
և երբ Տիրոջը դիմեմ,
Նա ինձ կլսի:
5.—Բարկացե՛ք, բայց մի մեղանչեք,
ինչ որ ձեր սրտերում խորհեք,
զղջացեք ձեր անկողիններում:
6.—Արդարության զոհեր մատուցեք
և Տիրոջ վրա ձեր հույսը դրեք:
7.—Շա՜տ են ասողները,
թե՝ «ո՞վ պիտի ցույց տա մեզ բարություն»:
Քո տեսքի լույսը մեր վրա շողաց
8.—և ուրախություն տվիր մեր սրտերին:

Նրանց հագեցրիր ցորենի, գինու և ձեթի արդյունքով,
9.—խաղաղության այս վստահությամբ
պիտի ննջենք և արթնանանք,
10.—որովհետև, ո՜վ Տեր, միայն դու ես
ապահովությամբ մեզ բնակեցնում:

ՍԱՂՄՈՍ Ե

1.—Երգուսույցին
2.—Ունկն դիր, Տե՜ր, իմ խոսքերին
և նկատի առ իմ աղաղակը:
3.—Ուշադիր եղի՛ր աղոթքիս ձայնին.
թագավոր իմ, Աստված իմ,
4.—աղաչում եմ քեզ, Տե՜ր,
առավոտ վաղ լսի՜ր ձայնս.
առավոտ վաղ պատրաստ կլինեմ
դեմդ ելնելու:
5.—Դու չես կամենում անօրենություն,
չարերը քեզ մոտ չեն բնակվում,
6.—անօրենները չեն բնակվելու քո աչքերի առջև:
7.—Անօրենություն գործողներին ատում ես դու,
կորուստի ես մատնում ստախոսներին:
Արյունահեղ և նենգավոր մարդը, Տե՛ր,
պիղծ է քեզ համար,
8.—մինչ ես քո առատ ողորմության շնորհիվ
տունդ կմտնեմ,
կերկրպագեմ քո երկյուղով
քո սուրբ տաճարում:
9.—Տե՜ր, քո արդարությամբ ինձ առաջնորդի՛ր,
իմ թշնամիների պատճառով
ուղիղ արա՛ իմ առջև քո ճանապարհը,
10.—նրանց բերանների մեջ
ճշմարտություն չկա՛
և նրանց սրտերը նանիր են,
11.—նրանց կոկորդները բաց են՝
ինչպես գերեզմանը,
նրանք նենգավոր եղան իրենց լեզուներով:
Դատի՛ր նրանց.
Ո՜վ Աստված,
թող նրանց խորհուրդները կործանվեն
իրենց ամբարշտություններին համար:
Մերժի՛ր նրանց,
որովհետև քեզ դառնացրին:
12.—Ուրախ պիտի լինեն քեզ հուսացողները
և հավիտյան ցնծան
և դու նրանց եջ պիտի բնակվես:
Քո անունը սիրողները

պիտի զվարճանան քեզանով,
13.—որովհետև դու օրհնում ես արդարին, ո՜վ Տեր,
և հաճությամբ պատում ես նրանց՝
ինչպես վահանով:

ՍԱՂՄՈՍ Զ

1.—Երգուսույցին
2.—Տե՛ր, քո սրտմտությամբ ինձ մի՛ հանդիմանիր
և մի՛ խրատիր քո բարկությամբ:
3.—Ողորմի՛ր ինձ, Տե՜ր, որովհետև հիվանդ եմ ես
բժշկի՛ր ինձ, որովհետև քայքայվեցին ոսկորներս,
4.—իմ հոգին խռովեց հույժ, իսկ դու, Տե՛ր, մինչև ե՞րբ...
5.—Դարձի՛ր, Տե՜ր, և փրկի՛ր ինձ,
ապրեցրո՛ւ ինձ, Տե՜ր, քո ողորմությամբ,
6.—որովհետև մահվան մեջ չկա մեկը, որ հիշի քեզ.
կամ դժոխքում, որ քեզ խոստովանի:
7.—Ես հոգնեցի իմ հեծությամբ,
ամեն գիշեր լվանում եմ մահիճս
և իմ արցունքներով թրջում անկողինս:
8.—Սրտմտությունից աչքս խռովեց,
և ես մաշվեցի —
իմ բոլոր թշնամիների պատճառով:
9.—Հեռացեք ինձանից բոլորդ,
որ անօրենություն եք գործում,
10.—որովհետև Տերը լսեց հեկեկանքս,
լսեց աղաչանքս
և աղոթքս ընդունեց:
11.—Թող ամաչեն և խռովեն
իմ բոլոր թշնամիները,
թող ետ դառնան և ամաչեն հույժ
և շուտով խռովեն:

Թարգմ.՝ Ա. Ե.